ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԴԱՇՏԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 4

Դաշտաքար համայնքում 2016 թ-ի մայիսի 27-ին, ժամը 11^{00}-ին տեղի ունեցավ ավագանու թիվ 4 նիստը: Նիստին մասնակցում էին ավագանու անդամներ.

Աբրահամ Աբրահամյան
Լյուդվիգ Այնազյան
Արմեն Աթոյան
Արամ Մալխասյան
Արտակ Օհանյան

Համայնքապետարանի առաջին կարգի մասնագետ՝ Հ. Հակոբյանը:

Նիստը նախագահում էր համայնքի ղեկավար՝ Ն.Մալխասյանը
Նիստը քարտուղարում էր աշխ. քարտուղար՝ Ա.Վարդանյանը:

Օրակարգում՝

1. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՐՑԸ
2. ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՐՑԸ
3. ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ԲԱՑ ԼՈՒՄՆԵՐԻ ԵՎ (ԿԱՄ) ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՐՑԸ

ԼՍԵՑԻՆ – 1. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՐՑԸ

(զեկուցող՝ Ն. Մալխասյան)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 34-րդ կետի և 54.1-ին հոդվածի 1-ին և 3-րդ մասերի պահանջներով և հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 10.2-րդ կետը և 33.1-ին հոդվածը

Դաշտաքար համայնքի ավագանին որոշում է.

ՈՐՈՇՈՒՄ 8

1. Հաստատել «Համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների ձևավորման և գործունեության կարգը»՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Աբրահամ Աբրահամյան

Լյուդվիգ Այնազյան

Արմեն Աթոյան

Արամ Մալխասյան

Արտակ Օհանյան

Արտահայտվեցին ավագանու անդամներ՝ Լյուդվիգ Այնազյանը և Արամ Մալխասյանը:

2. ԼՄԵՑԻՆ- ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Ն.Մալխասյանը /

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 30-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10.1-ին հոդվածի, 16-րդ հոդվածի 33-րդ կետի, 20-րդ հոդվածի 3.2-րդ կետի, 30-րդ հոդվածի 6.1-ին կետի, 33.1-ին հոդվածի 1-4-րդ կետերի, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-14-րդ հոդվածների, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27.1-ին հոդվածի 4-րդ մասի, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիան, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2014թ. նոյեմբերի 19-ի «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին» № 1325-Ն որոշումը.

Դաշտաքար համայնքի ավագանին որոշում է.

ՈՐՈՇՈՒՄ 9

1. Հաստատել «Համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը»՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Արտահայտվեցին ավագանու անդամներ՝ Աբրահամ Աբրահամյանը, Լյուդվիգ Այնազյանը և Արմեն Աթոյանը

Որոշումն անցավ միաձայն.

Աբրահամ Աբրահամյան

Լյուդվիգ Այնազյան

Արմեն Աթոյան

Արամ Մալխասյան

Արտակ Օհանյան

ԼՍԵՑԻՆ – 3. ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ԲԱՑ ԼՍՈՒՄՆԵՐԻ ԵՎ (ԿԱՄ) ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՐՑԸ

(զեկուցող՝ Ն. Մալխասյան)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33.1-ին հոդվածի 3-րդ կետով, 54.1-ին հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, 69-րդ հոդվածի 2-րդ մասով և հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27.1-ին հոդվածի 4-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ պարբերությունները, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13 և 14 հոդվածները և «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասը, 2-րդ մասի 3-րդ կետը

Դաշտաքար համայնքի ավագանին որոշում է.

ՈՐՈՇՈՒՄ 10

1.Հաստատել «Համայնքում հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը»՝ համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Սեփականաշնորհման ավագանու անդամներ՝ Աբրահամ Աբրահամյանը, Լյուդվիգ Այնազյանը և Արմեն Աթոյանը

Դիտարկմամբ անցավ միաձայն.

Աբրահամ	Աբրահամյան	
Լյուդվիգ	Այնազյան	
Արմեն	Աթոյան	
Արամ	Մալխասյան	
Արտակ	Օհանյան	

Ավարտելով հաստատված օրակարգի հարցերի քննարկումները՝ համայնքի ղեկավարը հանդես եկավ հայտարարությամբ և նիստը հայտարարեց փակված:

Համայնքի ղեկավար՝ Ն. Մալխասյան

Աշխ.քարտուղար՝ Ա. Վարդանյան